

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 29/5

10 հունիսի 2013թ.

Քննարկվեց <Վեդի Պլաստ> ՍՊԸ դիմումով բերված բողոքը ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 18.04.2013 թ-ի թիվ 1422066 վարչական ակտի դեմ:

<Վեդի Պլաստ> ՍՊԸ (այսուհետ նաև ընկերություն) բողոքում մասնավորապես նշված է.

Հայտնում եմ Ձեզ, որ ս.թ. ապրիլի 4-ին <ՎՕՍ Բարեգործություններ> կորպորացիայի պայմանագրի համաձայն Գեղարքունիքի մարզ, Ակունքի Գյուղապետարանի վարորդ Աշոտ Հայրապետյանի միջոցով տեղափոխվում էր պայմանագրով նախատեսված պլաստմասե խողովակներ.

1. Պլ. խողովակ 110 մմ 830 մ X 2850 դրամ = 2 365 500 դրամ:

2. Պլ. խողովակ 75 մմ 1210 մ X 1730 դրամ = 2 093 300 դրամ:

3. Պլ. խողովակ 63 մմ 1000 մ X 1400 դրամ = 1 400 000 դրամ:

4. Ձևավոր մասեր 16 հատ X 4800 դրամ = 76 800 դրամ:

Ընդամենը 5 935 600 դրամ:

Համաձայն ծրագրի 2.1.2 դրույթների ի պահի պայմանագիր թիվ 11 իր ուղեկցող փաստաթղթով:

Քանի, որ Ակունքի գյուղապետարանը համարվում է երրորդ կողմ, ուստի ի պահի պայմանագիրը <Վեդի Պլաստ> ՍՊԸ-ի և Ակունքի գյուղապետարանի համար համարվում է հիմք:

ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ վարչության 30-րդ բաժնի օպերատիվ միջոցառումների արդյունքում արձանագրվել է <Հարկերի մասին> ՀՀ օրենքի հավելված 4-ով սահմանված կարգով սահմանված անփաստաթուղթ արտադրանք, սակայն ուղեկցող փաստաթղթում առկա վավերապայմանները հիմնավորում են 4-րդ կետի պահանջների կատարված լինելը: Ուստի առարկում ենք ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 30-րդ բաժնի պետի 18.04.2013թ. թիվ 1422066 վարչական ակտով հարկային պարտավորությունների առաջադրման և պատասխանատվության միջոցների կիրառմանը՝ գումարով 4317800 դրամ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով ընկերության ներկայացուցչի և ստուգման ակտը կազմած պաշտոնատար անձանց ներկայացրած փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ բողոքը ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 30-րդ բաժնի պետի 18.04.2013թ. թիվ 1422066 վարչական ակտով (այսուհետ նաև վարչական ակտ) մասնավորապես արձանագրվել է.

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի տեղակալի 04.04.2013 թ-ի թիվ 1422066 որոշման համաձայն, ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 30-րդ բաժնի օպերիվազորներ Հ.Հովհաննիսյանը և Վ.Հայրապետյանը ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված սահմաններում առաքվող կամ տեղափոխվող բեռների փաստաթղթային ձևակերպումները ստուգելու նպատակով սույն թվականի ապրիլի 4-ին, ժամը 09:30-ի սահմաններում <Վեդի Պլաստ> ՍՊԸ-ի նկատմամբ իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների ընթացքում պարզել են, որ ընկերության ՁԻԼ 130 Վ1 մակնիշի 19 ԼԼ 911 պետհամարանիշի բեռնատար ավտոմեքենայով վարորդ Աշոտ Հայրապետյանի միջոցով առանց ուղեկցող փաստաթղթի Գեղարքունիքի մարզի Ակունք

գյուղ էր տեղափոխվում 830 մետր պլաստմասե խողովակ 110 մմ, 1210 մետր պլաստմասե խողովակ 75 մմ, 1000 մետր պլաստմասե խողովակ 63 մմ և 16 հատ ձևավորող մասեր: Տեղափոխվող ապրանքների արժեքները, ըստ 04.04.2012 թ-ի ի պահի պայմանագրի, կազմում են համապատասխանաբար 2365500 դրամ, 2093300 դրամ, 1400000 դրամ և 76800 դրամ, ընդամենը՝ 5935600 դրամ:

Նույն օրը, ժամը 11:00-ի սահմաններում, <Վեդի Պլաստ> ՍՊԸ-ի նկատմամբ իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների ընթացքում պարզվել է նաև, որ ընկերության ԳԱԶԵԼ 330202-414 մակնիշի 33 ՎՍ 741 պետհամարանիշի ավտոմեքենայով վարորդ Արթուր Պողոսյանի միջոցով առանց ուղեկցող փաստաթղթի Կոտայքի մարզի Բյուրեղավան քաղաք էր տեղափոխվում 1 հատ հատիկավորող հաստոց: Տեղափոխվող ապրանքների արժեքները, ըստ 04.04.2012 թ-ի ի պահի պայմանագրի, կազմում է 2700000 դրամ: <Վեդի Պլաստ> ՍՊԸ-ի նկատմամբ իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների ընթացքում արձանագրվել է, որ ընկերությունն առանց ուղեկցող փաստաթղթի կատարել է ընդամենը 8.635.600 դրամ ապրանքների տեղափոխում:

Ընկերության կողմից խախտվել է <<Հարկերի մասին>> ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի բաղկացուցիչ մասը կազմող Հավելված 4-ով սահմանված՝ Հայաստանի Հանրապետությունում առաքվող կամ տեղափոխվող արտադրանքի, ապրանքների փաստաթղթավորման և գրանցման (հաշվառման) Կարգի 3-րդ հոդվածի պահանջները: Ելնելով նշվածից, ինչպես նաև հիմնվելով նույն կարգի 5-րդ հոդվածի 1-ին մասի վրա, 8.635.600 դրամի ապրանքը համարվում է անփաստաթուղթ ապրանք, որի նկատմամբ կիրառվել է <<Հարկերի մասին>> ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով սահմանված տուգանքը 50 տոկոսի չափով, գումարով 4.317.800 դրամ:

Քննարկման ընթացքում ընկերության հաշվապահը նշեց, որ վարչական ակտով պարտավորությունների հաշվարկման ընթացքում հիմք է ընդունվել վերը նշված ի պահի պայմանագրում արտացոլված տվյալները: Սակայն, հաշվի չի առնվել այն հանգամանքը, որ ի պահի պայմանագրում արտացոլված տվյալներում ապրանքների գներից բացի ներառված են նաև այդ ապրանքների տեղադրման աշխատանքների կատարման արժեքը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ընկերության հաշվապահը միջնորդեց Հանձնաժողովին, որպեսզի <<Հարկերի մասին>> ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով սահմանված տուգանքի հաշվարկման ժամանակ հիմք ընդունվեն միայն ի պահի պայմանագրում արտացոլված ապրանքների իրական արժեքները:

Քննարկման ընթացքում վերոգրյալ խախտումն արձանագրած հարկային ծառայողները նշեցին, որ խախտումն արձանագրելուց հետո՝ մինչև վարչական ակտով լրացուցիչ պարտավորությունների առաջադրում, ընկերության տնօրենի և հաշվապահի հետ քննարկել են արձանագրված խախտումները և դրանցից բխող պարտավորությունների հաշվարկման եղանակներն ու չափը: Սակայն, հիմնավոր այլ ապացույցներ առանց ուղեկցող փաստաթղթերի տեղափոխվող ապրանքների գների վերաբերյալ հարկային ծառայողներին չի ներկայացվել:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ թե վարչական վարույթի և թե քննարկման ընթացքում ընկերության կողմից չեն ներկայացվել ի պահի պայմանագրում արտացոլված տվյալներից բացի այլ ապացույցներ, առանց ուղեկցող փաստաթղթերի տեղափոխվող ապրանքների գների վերաբերյալ, ուստի Հանձնաժողովը եզրակացնում է, որ վարչական ակտով պարտավորությունները հաշվարկվել են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հանձնաժողովի 21.05.2013 թ-ի նիստի քննարկման արդյունքում ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն վարչական ակտը թողնվել է անփոփոխ:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի <Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին> N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, սույն գործի վերաբերյալ Հանձնաժողովի կողմից ընդունված որոշման նախագիծը ուղարկվել է վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ (այսուհետ՝ Գանգատարկման խորհուրդ): Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է դրական եզրակացություն:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Վարչական ակտը թողնել անփոփոխ:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ



Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ